

**Բնապահպանական տեղեկատվության հասարակական  
կենտրոնի /Երևանի Օրիուս կենտրոն/  
2008 թ. կատարած աշխատանքների  
Հաշվետվություն**

2008թ.-ին Երևանի Օրիուս կենտրոնում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են Օրիուսի կոնվենցիայի դրույթների իրականացմանը: Կենտրոնը բնապահպանական բնույթի տեղեկատվությունը հասարակայնությանը տրամադրում է ըստ պահանջի և բնապահպանական տեղեկատվության հասարակական /Օրիուս/ կենտրոնների՝ [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի միջոցով: Կայքում ներկայացվում է բնապահպանությանն առնչվող նորություններ, հայտարարություններ, տեղեկատվություն ՀՀ բնապահպանական օրենքների, ՀՀ-ի կողմից վավերացված կոնվենցիաների, բնապահպանության ոլորտում իրականացված և իրականացվող ծրագրերի, բնապահպանական պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների մասին, ինչպես նաև բնապահպանական այլ տեղեկատվություն: Կայքում յուրաքանչյուր մարզային Օրիուս կենտրոն ունի իր էջը, որտեղ ներկայացվում է տվյալ կենտրոնի գործունեությունը:

2008թ., ըստ էկոլոգիական օրացույցի, համաշխարհային էկոլոգիական օրերի կապակցությամբ կայքում ներկայացվել է տվյալ օրվա վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն, ինչպես նաև ջրի, օդերևութաբանության և օզոնային շերտի, պահպանության համաշխարհային օրերի կապակցությամբ կենտրոնում տեղի են ունեցել տեղեկատվական-ուսուցողական սեմինարներ: Նշված սեմինարներին մասնակցել են ուսանողներ տարբեր ԲՈՒՀ-երից, ներկայացուցիչներ պետական, հասարակական, միջազգային կազմակերպություններից, ՋԼՄ-ներից, ինչպես նաև շահագրգիռ այլ անձիք: Համապատասխան փորձագետների կողմից մասնակիցներին ներկայացվել է ջրի նշանակության, օգտագործման ոլորտների, ՀՀ ջրային օրենսգրքի, Համաշխարհային Օդերևութաբանության Կազմակերպության գործունեության, կառուցվածքի, տվյալների փոխանակման համակարգի, դիտարկումներ կատարելու մեթոդների, Հայաստանի Օզոնի ազգային կենտրոնի գործունեության, օզոնային շերտի պահպանմանն ուղղված իրականացված եվ կայանալիք ծրագրերի, Հայաստանի կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի գործունեության, նպատակների, իրականացված ծրագրերի, կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանին սպառնացող վտանգների, Կիոտոյի արձանագրության և այլ տեղեկատվություն: Նշված սեմինարները տեղեկատվական

բնույթի են եղել և նպաստել են էկոկրթությանը: 2008թ. կենտրոնը կազմակերպել է նաև էկոկրթությանը նվիրված սեմինար-քննարկում պետական և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ քննարկվել է էկոկրթության ռազմավարության նախագիծը: Միջոցառմանը մասնակցել են նաև տարբեր ԲՈՒՀ-երի և դպրոցների բնագիտական առարկաների դասավանդողներ: Կենտրոնում տարբեր ԲՈՒՀ-երի ուսանողների համար կազմակերպվել են նաև բաց դասեր և բնապահպանական բնույթի ֆիլմերի դիտումներ:

Օրհուս կենտրոնների կայքի «Հայաստարարություններ» բաժնում ներկայացվել են բնապահպանական օրենքների նախագծերի և բնապահպանական փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ կայանալիք հասարակական լսումների մասին հայտարարությունները, ինչպես նաև այդ հայտարարությունները տարածվել են բնապահպանական ՀԿ-ների և այլ կազմակերպությունների միջև գոյություն ունեցող ներքին ինտերնետային ցանցով:

2008թ. Օրհուս կենտրոնը կազմակերպել է երեք քննարկում ճապոնական ՇԻՄԻՉՈՒ ընկերության կողմից մշակված «Նուբարաշենի ԿԿԹ աղբավայրում կենսազազի օգտահանում և էլեկտրական էներգիայի արտադրություն» ծրագրի նախագծի շուրջ, որոնց իրենց մասնակցությունն են ցուցաբերել մի շարք ՀՀ նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, ՁԼՄ-ների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նշված նախագիծը էկոլոգիական տեսանկյունից ընդունելի է, սակայն կառավարությունը մերժում էր նրա մեկնարկը:

Հաշվետու ժամանակահատվածում Օրհուս կենտրոնում քննարկման կարևոր թեմաներ են հանդիսացել օգոստոսի 21-ին ՀՀ Ազգային ժողովի Սևանի ջրի բացթողումների ավելացման մասին որոշումը, Թեղուտի հիմնախնդիրը, էկոլոգիական տեղեկատվության ազատությունը, ՀՀ Անտառային օրենսգրքից բխող ենթաօրենսդրական ակտերը, Երևան քաղաքի էկոլոգիական խնդիրները, Չարենց փողոցում հետիոտն անցում կառուցելու խնդիրը և այլ թեմաներ: Քննարկման թեմա է հանդիսացել նաև ՀՀ կառավարության լիազորված մարմնի՝ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Օրհուսի կոնվենցիայի քարտուղարությանն ուղղված պատասխանի տարբերակները, որոնք առնչվում էին Դալմայի այգիների մասին բողոքի հետ կապված գործադիր և դատական իշխանությունների պատասխաններին:

Բացի վերոնշյալ միջոցառումներից, Օրհուս կենտրոնում տարվում են ամենօրյա աշխատանքներ կենտրոնի այցելուների հետ, աշխատակիցների կողմից իրականացվում է բնապահպանական բնույթի տեղեկատվության հավաքագրում և

տարածում, կենտրոնը իր աջակցությունը և մասնակցությունն է ցուցաբերում այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին:

**Երևանի Օրհուս կենտրոնի  
կազմակերպիչ՝**

**Ս. Այվազյան**